Ի մասնավորի հանդիպումը անդրադարձավ «Եկեղեցիները երկխոսության մեջ» հանձնախմբի 2004 թվականի Աարհուսյան հանդիպման արդյունքներին, ԵԵԿ-ի Հետազոտական Կենտրոնի՝ «Եկեղեցիները Երկխոսության մեջ» հանձնախմբի վերաբերյալ որոշումներին, Եվրոպական Էկումենիկ 3-րդ Համահավաքին առնչվող նյութերին, Քարտա Էկումենիկայի շուրջ առաջացած դժվարություններին, Ուղղափառ և Բարեհորոգչական Եկեղեցիների հարաբերություններին, մեծամասնություն և փոքրամասնություն հանդիսացող Եկեղեցիներին, ինչպես նաև կրոնական համայնքների հետ հարաբերություններին:

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Միջեկեղեցական հարաբերությունների բաժին

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆՆ ՈՒ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ

Սույն թվականի մայիսի 9-16-ը Աթենքում տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի (ԵՀԽ)՝ աշխարհում Ավետարանի քարոզչությանն ու առաքելությանը նվիրված կոնֆերանսը՝ «Արի, Սուրբ Հոգի, բուժիր և հաշտեցրու» խորագրով: Առաջին անգամ էր, որ այդ հանձնախումբն իր ժողովը գումարում էր Ուղղափառ երկրում: Կոնֆերանսը տեղի ունեցավ Ս. Անդրեասի կենտրոնում, որ գտնվում է Աթենքից 30 կմ հյուսիս-արևելք: Հայ Առաքելական Եկեղեցին այդ կոնֆերանսին ներկայացնում էր երեցկին Պոլա Դևեջյանը, իսկ Վահագն ուրարակիր Ազիզյանը մասնակցում էր որպես երիտասարդ սպասավոր:

Կոնֆերանսի նպատակն էր՝ համախմբել 500 մասնակիցների աշխարհի ավելի քան 100 քրիստոնեական Եկեղեցիներից՝ միասին ջանալու այսօրվա աշխարհը Քրիստոսով բուժելու և հաշտեցնելու համար: Կոնֆերանսը մասնակիցներին հնարավորություն ընձեռեց միասին հավաքվել, իրենց փորձառությունը փոխանակել և միասին մտածել առաքելության մեջ առաջնահերթությունների և քրիստոնեական հետագա վկայության մասին:

Կոնֆերանսին մասնակցում էին բազմաթիվ երիտասարդներ, կանայք, տղամարդիկ, աստվածաբաններ, ուսանողներ, աշխարհականներ: Առաջին անգամ այդ կոնֆերանսին մասնակցում էին նաև ներկայացուցիչներ Հռոմեականթոլիկ Եկեղեցուց, ինչպես նաև Հոգեգալստական և ժամանակակից ավետարանական հարանվանություններից:

Կոնֆերանսի բացման արարողությանը Երուսաղեմի քրիստոնեական Եկեղեցիները փայտյա մի խաչ ներկայացրեցին և նվիրեցին կոնֆերանսին: ԵՀԽ գլխավոր քարտուղար դոկ. Սամուել Կոբիան հանդես եկավ բացման խոսքով: Բացման նիստին հնչեց նաև Աթենքի և Համայն Հունաստանի Արքեպիսկոպոս Նորին Ամենապատվություն Քրիստոդուլոսի ողջույնի խոսքը: Հունաստանի Արքեպիսկոպոսը շեշտեց էկումենիկ հանդիպումների և երկխոսության, ինչպես նաև քրիստոնեական ինքնության և առաքելության նոր արտահայ-

տության կարևորությունը, որպեսզի հնարավոր լինի դիմագրավել ժամանակակից մարտահրավերները:

Կոնֆերանսն ուղեկցվում էր ամենօրյա նիստերով, ծիսական արարողություններով, խմբակային աշխատանքներով:

Փոքրիկ աշխատանքային խմբերը բաղկացած էին 10 մասնակիցներից, որոնք հանդիպում էին ամեն օր, առավոտյան՝ խոկալու սուրբգրային ընթերցվածների շուրջ, և երեկոյան՝ կիսելու օրվա փորձառությունը և նախապատրաստվելու հաջորդ օրվան: Կոնֆերանսի յուրաքանչյուր մասնակից նշանակված էր աշխատելու մի աշխատանքային խմբում, որտեղ նա հնարավորություն ուներ մյուս մասնակիցներին ծանոթացնելու իր Եկեղեցու հետ և տեղեկանալու այլ Եկեղեցիների մասին:

Ամենօրյա նիստերն ընդգրկում էին հարցազրույցներ, ներկայացումներ, երաժշտություն, քննարկումներ՝ կենտրոնանալով այնպիսի հարցերի վրա, որոնք համապատասխանում էին կոնֆերանսի ընդհանուր թեմային: Ներկայացվեցին խնդիրներ աղքատության, աշխարհում տիրող սովի, ՁԻԱՀ-ի վերաբերյալ:

Ուղղափառների կողմից մի քանի թեմաներ ներկայացվեցին: Դրանցից մեկը վերաբերում էր Այբանիայի Ուղղափառ Եկեղեցու վերականգնման գործընթացին, ինչպես նաև Ուղղափառ աստվածաբանների ու հոգեգալստականների միջև դավանաբանական երկխոսությանը:

Ամենօրյա առավոտյան և երեկոյան ժամերգությունները կատարում էին տարբեր Եկեղեցիների ներկայացուցիչներ:

Կոնֆերանսի ընթացքում Արևելյան և Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների անդամները հնարավորություն ունեցան կոնֆերանսի ընթացքը քննարկել ոչ պաշտոնական մի հանդիպման ընթացքում, այնուհետև տեղի ունեցավ նաև պաշտոնական մի հանդիպում՝ քննարկելու կոնֆերանսի ուղերձի նախագիծը:

Վերջին օրվա աշխատանքի նպատակն էր՝ ավարտուն տեքստի բերել կոնֆերանսի մասնակիցների՝ քրիստոնյա աշխարհին ուղղված ուղերձի տեքստը՝ կոչ անելով Եկեղեցիներին՝ լինել բուժող և հաշտեցնող հույսի համայնքներ, որի դռները բաց են բոլորի առջև:

Նույն օրը ժողովականները նաև Աթենքում մասնակցեցին եկեղեցական արարողության, իսկ երեկոյան հավաքվեցին Արեոպագոսում, որտեղից Պողոս Առաքյալը քարոզել էր Աթենացիներին:

ՊՈԼԱ ԴԵՎԵՋՅԱՆ